

Հայերէն, եւ իտալերէնի թարգմանած էր Մուրատճա Պետրոս Վ.։ Մահն ու թաղումն արձանագրուած է նաեւ եկեղեցւոյն Մեռելոց գրքին մէջ։

Յետոյ Նուրտինեան վարդապետ տապանագիր մը շինեց Հայերէն, որ եւ քանդակուեցաւ կափարջին վրայ։ Նուրտինեան Վ. նաեւ Սարգսի նախ փոքրիկ կենդանագիրը նկարել տուաւ, զոր յետոյ ճարտար նկարիչ մը մեծցուց, եւ աւանդատան մէջ կախուեցաւ։

Այս կենդանագիրներն այժմ չկան Լիվոռնոյ, եւ այժմու Գերլ. Մեծաւորը թէեւ շատ հետամուտ եղաւ, բայց չկրցաւ գտնել Լիվոռնոյի մէջ։ Ինչպէս ինք 4 Յուլ. 1906 թուականաւ ինձ կը գրէ, նոյնն այժմ Հռոմ ի Ս. Վլաս պիտի ըլլայ։ Վասն զի իր դիմումին վրայ՝ Գեր. Գոյունեան Վ. գրեր է իրեն՝ թէ «Սարգսի նկարը կայ կ'ըսուի ի Հռոմ, սակայն որը ըլլալը յայտնի չէ»։ Կը յուսամ ուրիշ առթիւ ստուգել, գտնել եւ հրատարակել։

Վերն յառաջ բերուած կտակին համեմատ՝ Լիվոռնոյի Հայոց Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ մինչեւ ցայսօր կը մատուցուին մշտնջենաւոր պատարագները։ Այս մասին կը գրէ Ուղուրլեան Մ. Վ. (անդ, էջ 167—8)։ Իրկրորդ մշտնջենաւոր պատարագն «է Սարգսի Արքեպիսկոպոսի Սարգսեանին, որ հաստատեալ կոնդակաւ Բիղայու Արքեպիսկոպոսին 7 Փե-